№ 66 ԱՊՐԻԼԻ 28 (ՄԱՅԻՍԻ 10) 1878 ԱՊՐԻԼԻ 28 (ՄԱՅԻՍԻ 10) № 66

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքեր։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Շուշաւերից։ Նամակ Բայանդուրից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։ — Խառն լուրեր։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Ամեն տեղից։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐ

—

Ռուսաստանի Թիւրքիայի հետ ունեցած վերջին պատերազմի բոլոր ժամանակ Գերմանիան խաղում էր միջնորդի դերը։ Գերմանիան արևելեան խնդրի մէջ մի չէզոք երկիր էր, որին դիմում էր ինչպէս մէկ նոյնպէս էլ միւս պատերազմող կողմ, երբ ուզում էր յայտնել իր բողոքը, գանգատը, կամ խնդիրքը։

Երբ ստորագրվեցաւ Սան-Ստէֆանոյի խաղաղութեան դաշնագիրը և Անգլիան դրեց իր խիստ veto այդ դաշնագրի վրա և երկու պետութիւնների մէջ՝ Ռուսաստանի և Անգլիայի մէջ սկսվեցան բանակցութիւնները կոնգրեսի կայացնելու և ընդհանուր զիջումների մասին, այդ ժամանակ Գերմանիան աւելի եռանդով և գորժունէութեամբ էր կատարում իր վրա առած միջնորդի դերը։ Բանակցութիւնները դադարեցին և Գերմանիայի միջնորդութիւնը ոչինչ հետևանք չունեցաւ։ Բայց վերջին շաբաթվայ հեռագիրներից մէկը մեզ տեղեկացրեց, որ Գերմանիան անտարբեր և չէզոք չի մնայ, եթէ Ռուսաստանի և Անգլիայի մէջ պատերազմ ծագեց, որ ինչպէս երևում է շատ հաւանական է։

«Ես առանց օգնութեան չեմ թողնի իմ Բրոլ Որդուն» ասել է գերմանական կայսրը Բերլինի վերջին զօրախաղի ժամանակ իր շրջապատող գեներալներին։ Ուրեմն եթէ պատերազմ ծագեց, Գերմանիան այդպէս թէ այնպէս պէտք է օգնէ Ռուսաստանին։

Երբ գերմանական կայսրի ասած այդ նշանաւոր խօսքերը հեռագիրը հասցրեց ամեն տեղ, լրագիրները կարծիք յայտնեցին, որ Անգլիան դրանից յետոյ զիջումներ կանի, կը փոխի իր բռնած ընթացքը, բայց իսկապէս Անգլիայի քաղաքականութեան մէջ ոչինչ փոփոխութիւն չեղաւ։

Միակ զիջումն այն էր, որ Անգլիան համաձայնվեց շարունակել ընդմիջված բանակցութիւնները կոնգրեսի կայացնելու մասին, բայց այնու ամենայնիւ նա իր նախկին առաջարկած պայմանը՝ անվաւեր համարել Սան-Ստէֆանոյի դաշնագիրը, և նրա բոլոր կէտերը կոնգրեսի քննութեանը ենթարկել՝ այս պայմանը Անգլիան չը փոխեց։

Սխալ կը լիներ կարծել, որ Անգլիան համաձայնվելով նորից սկսել բանակցութիւնները, կարող է զիջումներ անել իր պահանջներից։ Ընդհակառակն Անգլիան համաձայնելով շարունակել ընհատված բանակցութիւնները, ոչինչ չէ կորցնում, որովհետև չէ փոփոխում նախկին առաջարկած պայմաններից ոչ մէկը, այլ ժամանակ է շահում իր պատերազմական պատրաստութիւնները աւարտելու համար։

Աւստրիայի քաղաքականութեան մասին մեզ հասած վերջին տեղեկութիւնները արդէն հաղորդեցինք մեր ընթերցողներին անցեալ համարներից մէկում։ Այդ ժամանակից ոչինչ փոփոխութիւն չէ եղել։

Ֆրանսիան այժմ Եւրոպայի ուշադրութիւնը գրաւել է երկու բանով՝ մէկը իր արդէն բացված աշխարհանդէսն է, իսկ միւսը հանրապետականների առաջնորդ Գամբետայի ճանապարհորդութիւնը, որի մասին լրագիրները շատ խօսեցին։ Գամբետան, ինչպէս հաղորդում են Ֆրանսիական լրագիրները, այցելեց Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի մայրաքաղաքները։ Լրագիրները կարծում են, որ Գամբետայի ճանապարհորդութեան նպատակն էր արևմտեան Եւրոպայի պետութիւններից մի դաշնակցութիւն կազմել։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՎԵՐԻՑ

—

25 ապրիլի

Գիւղի մէջ տանուտէրը որ ընտրվում է գիւղացիներից, մեծ դեր է կատարում իր պաշտօնով ժողովրդի մէջ։ Տանուտէրը պիտի հոգայ գիւղի ներքին բարեկարգութիւնների, պիտի հսկէ բոլոր անկարգութիւնների վրա։ Նրան յատկացրած չէ ռոճիկ, այլ միայն ազատված է լինում նա տէրութեան հարկից։ Չը նայելով դրան, գիւղացիներից ամենքն էլ ուզում են տանուտէր դառնալ. այդպիսի տանուտէրը ինքը իր ձեռքովն է վարձատրվում, նա ամեն միջոցները գործ է դնում օգուտ քաղել սրա և նրա գանգատից, ու իր արժանի վաստակը—ընծան ստանալ. նա երբեմն անց է կենում իր իրաւունքների սահմանից և ժողովրդի ստոր դասին նեղելով, իսկ հարուստներին գրաւելով ամենքին էլ հնազանդեցնում է իր կամքի տակ։ Այդպէս են լինում առհասարակ բոլոր գիւղերի տանուտէրները, այդպիսի տանուտէրներն էլ մեր գիւղի մէջ անպակաս են եղել։ Բայց մի քանի տարի սրանից առաջ մեր գիւղացիք բաղդ ունեցան ունենալ մի այնպիսի տանուտէր, որ յիրաւ, գերազանցվում էր իր բոլոր յատկութիւններով։ Այդպ. Բաղդամօվն էր, որ իր բոլոր ուշք ու միտքը դարձրեց ամենից առաջ գիւղի մէջ բոլոր դաղութիւններին վերջ տալու, որ և արեց։ Նա ինքը գիւղերները մի քանի երիտասարդների հետ պտտում էր ամբողջ գիւղը և ամեն մի փոքր չարութեան առաջն խլոյն առնում էր։ Բանտարկած դաղերին որպէս պատիժ, մաքրել էր տալի փողոցները, ծառայեցնում էր գիւղացւոց ուրիշ պիտոյքների համար։ Նա միշտ հաղում էր աւելի խեղճ դասի ժողովրդի համար և երբեք չաշխատեց իր նախորդների նման հարուստներին իր կողմը գրաւել, այդպիսով նա շատերի նախանձը շարժեց և սկսեցին թշնամանալ. մի խօսքով այդ պարոնը իր արդար ծառայութեամբ այնպէս գրաւեց հասարակ ժողովրդի սիրտը, որ աշխատում էին առանձին ռոճիկ նշանակել դրա համար։ Բայց ինչ. այդ մի և նոյն մարդը այժմ ժողովրդի աչքին այնպէս ատելի է դարձել, որ բաւական չը համարելով պաշտօնից զրկելը, ինչպէս լսեցի, այժմ դատի տակ են ենթարկում նրան։ Ասում են դրա մասին, որ շատ չարութիւններ է արել այս և այն հարուստներին, իսկ որ դրան ուրիշ շատ բաներում էլ մեղադրում են, դրա պատճառը նոյն իսկ իրանք չուլաւերցիք են։ Այն մարդը, որ առաջ լաւ էր, այնքան դրդեցին, որ ինքն իրան վատացաւ։ Այդպէս են վարվում միշտ մեր գիւղացիք ամեն մի արժանաւորի հետ։

Այս դատի օրերին մեր գիւղին այցելեց արդիզոր վարդապետ Գառնակերեանցը, որ իր ազգու և խելացի քարոզներով ժողովրդին ներգործեց, մանաւանդ խօսելով գեղեցիկ սեռի բարձր նշանակութեան վրա կրթութեան մէջ։ Մեր գիւղացիք երկու տարուց առաջ տաքացած խօսում էին ուսումնարանի վրա, որ պ. Նադիրեանի բարձի թոզի անելուց յետոյ իրանք պիտի հոգայինք, աւելացնելով և օրիորդաց ուսումնարանը, բայց օրիորդաց ուսումնարանի համար գետինը գնեցին և այնպէս մինչև այսօր թոզած է, իսկ տղայոցն էլ աւելի ծաղկացնելու փոխարէն հիմնայատակ արեցին։ Մի քանի տարուց առաջ նախկին թեմական տեսուչը այցելելով մեր գիւղը յորդորեց ժողովրդին որ ուսումնարանի համար մի հիմնաւոր գումար կազմեն և նրա տակասով ուսումնարանը առաջ տանեն։ Ամենքը համաձայնվեցան և 9 տարիով հաստատ մուրհակներ տուեցին ուսումնարանին, որ իւրաքանչիւր հինգ բոպէի ընթացքում մէկը ծնվում է, իւրաքանչիւր ութ բոպէի ընթացքում մէկը մեռնում է։ Պոլիցիայի ցուցակին համեմատ Լօնդոնում 117,000 մարդ յանցանքը իրանց համար արհեստ են շինել, 23,800 գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ յայտնի են իբրև հասարակաց կանայք, 38,000 արբեցողներին, որոնք ոչ մի կերպ չեն ուղղվում, իւրաքանչիւր տարի կալանաւորում է պոլիցիան։

* * *

Ամերիկայում այնքան շատ լրագիրներ, ամսագիրներ, գրքերի զանազան յայտարարութիւններ են տպվում, որ այնտեղ չը գիտեն, ինչպէս գործածեն տպած թուղթը։ Այս չարիքի առաջն առնելու համար ամերիկացիք մի գիտ են արել. նոքա տպած թղթից պատրաստում են աղիւսներ (ադուրներ) շինութիւնների համար։ Այսպիսով ամերիկացիք երկու նպատակի են հասնում, առաջինը օգուտ են քաղում տպած թղթից և երկրորդ ազատում են հասարակութիւնը աւելորդ տպած գրքեր կարդալուց։ Հայերը վերջին ժամանակ շատ են զբաղված տներ շինելով և գրքեր տպելով, լաւ չէր լինի արդեօք, որ տանտէրերը օգուտ քաղէին աւելորդ տպած թղթից ինչպէս «Վէզուվեան ճանապարհորդութիւն», «Արարատ» ամսագիր, «Հայկական Աշխարհ» և այլ այսպիսի հրատարակութիւններ և շինութիւնների համար աղիւսներ շինէին։ Խօ մեզանում ամեն նորութիւն ընդունում են, գուցէ այդ էլ կընդունեն....

* * *

Կանայք (պէտք է խոստովանել) մեծ առաջադիմութիւն են անում, թէպէտ նոքա (նոյնպէս պէտք է խոստովանել) չեն ազատվում յայտնի նախապաշարմունքներից։ Նոքա լինում են լաւ գրողներ, լաւ խմբագրուհիներ և լաւ փաստաբաններ։ Մի գործ, որի համար կինը աշխատում է, պէտք է հաւատացած լինել, որ անպատճառ կաջողվի։ Մի ռուս լրագրի թղթակիցը հաղորդում է, որ նորերումս Ռուսաստանի Կէլեց քաղաքում մի կին քաղաքական գործ էր պաշտպանում, որ սաստիկ խրճճված էր։ Շատ փաստաբաններ հրաժարվել էին այդ գործից։ Փաստաբան-կինը այնպիսի փաստեր բերեց, այնպիսի ջերմութեամբ էր խօսում, որ գործը տարաւ և իր եղբայրակից փաստաբաններին զարմացած թողեց։ Հայերի մէջ չը կան փաստաբան կանայք, բայց գրողներ, թարգմանողներ և լրագրին աշխատակցող կանայք հայերի մէջն էլ կան։ Այս հանգամանքը մի քայլ է դէպի առաջադիմութիւն, բայց եթէ մեր գեղեցիկ սեռի ինտելիգենցիան աշխատեր հայերէն գրել, տպագրական խօսքը իր սրտին աւելի մօտ առարկայ ընդունէր, դա կը լիներ երկու քայլ դէպի առաջադիմութիւն։ Գուցէ շատերը ինձ հետ համաձայն են, բայց... o tempora, o mores...ով սովորութիւններ և նախապաշարմունքներ...

* * *

Աարդկութեան երկու սեռի ներկայացուցիչների երկու հնարագիտութիւններ կը պատմեմ։ Մի կին զեյլերեան ջուրը գործ է ածում, իբրև հանգստացնող դեղ, իսկ մի պարոն գինին, իբրև դեղ ատելի ամուսնութենից ազատվելու։ Ահա գործը ինչումն է։ Յայտնի երգչուհի Պատտի, որ իտալական օպերայի առաջին տենոր Նիկոլինիի հետ է ամուսնացած, այժմ երգում է Միլանում։ Մօտ ժամանակներում La Scala թատրոնի կուլիսներում Նիկոլինի նկատեց, որ դերասաններից մէկը աւելորդ ուշադրութիւն է դարձնում իր գեղեցիկ կէսի վրա և սիրահարված հայեացքներ է ուղղում Պատտի կողմը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԵՆ ՏԵՂԻՑ

—

Մի ժամանակ ես խոստացայ ընթերցողին հաղորդել երբեմն երբեմն վիճակագրական տեղեկութիւններ։ Մինչև այժմ խօսքս չը կատարեցի։ հիմա կը հաղորդեմ Փարիզի և Լօնդոնի, այդ երկու մեծ քաղաքների վիճակագրական տեղեկութիւններից մի քանիսը։ Աւելի լաւ է ամեն բան ուշ կատարել, քան թէ երբէք։ Փարիզի լրագիրները հաղորդում են, որ 1877 թվին բնակիչների թիւը 1,986,748 հոգի էր։ Այսքան բնակիչների քանակութենից եղան 18,088 պակվողներ, 58,472 ծնվողներ և 53,353 մեռնողներ։ Ուրեմն ծնվողների թիւը շատ քիչով է աւելի մեռնողների թիւից։

Այժմ Լօնդոնի բնակիչները չորս միլիոնից աւելի են։ Այս թվից 100,000 մարդ օտարականներ են։ Լօնդոնում աւելի շատ կաթոլիկներ կան, քան թէ Հռոմում, աւելի շատ հրէաներ քան թէ Պալեստինայում, աւելի շատ իրլանդացիներ քան թէ Դուբլինում և աւելի շատ չօտլանդացիներ, քան թէ Էդինբուրգում։ Իւրաքանչիւր հինգ բոպէի ընթացքում մէկը ծնվում է, իւրաքանչիւր ութ բոպէի ընթացքում մէկը մեռնում է։ Պոլիցիայի ցուցակին համեմատ Լօնդոնում 117,000 մարդ յանցանքը իրանց համար արհեստ են շինել, 23,800 գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ յայտնի են իբրև հասարակաց կանայք, 38,000 արբեցողներին, որոնք ոչ մի կերպ չեն ուղղվում, իւրաքանչիւր տարի կալանաւորում է պոլիցիան։

* * *

Ամերիկայում այնքան շատ լրագիրներ, ամսագիրներ, գրքերի զանազան յայտարարութիւններ են տպվում, որ այնտեղ չը գիտեն, ինչպէս գործածեն տպած թուղթը։ Այս չարիքի առաջն առնելու համար ամերիկացիք մի գիտ են արել. նոքա տպած թղթից պատրաստում են աղիւսներ (ադուրներ) շինութիւնների համար։ Այսպիսով ամերիկացիք երկու նպատակի են հասնում, առաջինը օգուտ են քաղում տպած թղթից և երկրորդ ազատում են հասարակութիւնը աւելորդ տպած գրքեր կարդալուց։ Հայերը վերջին ժամանակ շատ են զբաղված տներ շինելով և գրքեր տպելով, լաւ չէր լինի արդեօք, որ տանտէրերը օգուտ քաղէին աւելորդ տպած թղթից ինչպէս «Վէզուվեան ճանապարհորդութիւն», «Արարատ» ամսագիր, «Հայկական Աշխարհ» և այլ այսպիսի հրատարակութիւններ և շինութիւնների համար աղիւսներ շինէին։ Խօ մեզանում ամեն նորութիւն ընդունում են, գուցէ այդ էլ կընդունեն....

* * *

Կանայք (պէտք է խոստովանել) մեծ առաջադիմութիւն են անում, թէպէտ նոքա (նոյնպէս պէտք է խոստովանել) չեն ազատվում յայտնի նախապաշարմունքներից։ Նոքա լինում են լաւ գրողներ, լաւ խմբագրուհիներ և լաւ փաստաբաններ։ Մի գործ, որի համար կինը աշխատում է, պէտք է հաւատացած լինել, որ անպատճառ կաջողվի։ Մի ռուս լրագրի թղթակիցը հաղորդում է, որ նորերումս Ռուսաստանի Կէլեց քաղաքում մի կին քաղաքական գործ էր պաշտպանում, որ սաստիկ խրճճված էր։ Շատ փաստաբաններ հրաժարվել էին այդ գործից։ Փաստաբան-կինը այնպիսի փաստեր բերեց, այնպիսի ջերմութեամբ էր խօսում, որ գործը տարաւ և իր եղբայրակից փաստաբաններին զարմացած

քանչիւր տարի տոկոսը վճարեն, առաջին տարի չատերը հարիւր ռուբլիներով մուրհակի փոխարէն փողը իսկոյն վճարեցին, որ 9 տարվայ համար տոկոս չը տան, իսկ մնացածները մուրհակները առել են և այնպէս մնացել է. ոչ փողն են վճարում և ոչ էլ պահանջող կայ։ Եթէ մի քանի անձինք հետևեն ուսումնարանը վերականգնելու համար, չատ դիւրութեամբ կարող են այդ վաւերացած մուրհակներով փողերը ժողովել, որ բաւական գումար կը կազմվի։ Ի՞նչ են չինում մեր ազնուականները, որ փողոցներում աղատ չրջում են, մի՞թէ դրանք չեն զգում, որ իրանց պարտականութիւն է հոգալ այն ժողովրդի համար, որից պատրաստի արդիւնք են ստանում։ Վերջացնելով նամակս, կը հաղորդեմ որ մեր գիւղացիք տեղիս քանի մի հրէաներին ատելով ատում են, այդ հրէաներն են որ առուտուր են անում այստեղ կանանց հետ։ Մի աւանդութիւն կայ մեր ժողովրդի մէջ, որ իբր թէ հրէաները ամեն չարչարանքի գիշերը Քրիստոսի փոխանակ մի որ և է անասունի, օրինակ հաւին, մերկացնում են և ասեղներով ծակծկում, չատ անգամ էլ քրիստոնեայ երեխաներին. այդ պատճառով էլ տեղիս ժողովուրդը ամեն տարի այդ ուրբաթ գիշերը յարձակվում է հրէաների վրա և չատ նեղացնում։ Իսկ այս տարի ուրբաթ, չարչարանքի գիշերը մի քանի երիտասարդներ յարձակվել են նրանց սինագոգի վրա և բոլորովին կողոպտելով հիմնահատակ արել։ Տեղիս նաչալնիկը մեծ հսկողութեամբ հետևում է չարագործներին կալանաւորել։

Արսէն

ՆԱՄԱԿ ԲԱՑԵԱՆԴՈՒՐԻՑ

10 ապրիլի

Ալէքսանդրապոլի չրջակայքում գտնված գիւղերում չատ վաղուց արմատացել է կուսակցասիրութիւնը։ Գլխաւորապէս ձմեռ ժամանակներում, երբոր գիւղացիք վերջացրած են լինում իրանց երկրագործական պարապմունքները և որ էլ ուրիշ օգտաւէտ բաների վրա մտածելու և խօսելու սովորութիւն չունեն, հաւաքվում են այս և այն առաջաւոր մարդկերանց տաք ախոռներում և սկսում են կուսակցութիւններ կազմել։

Մեծ մասամբ գիւղական կուսակցութիւնները առաջ են գալիս կամ գիւղի քեօխվէն պաշտօնից հանելու, կամ ծխատէր քահանայացու ընտրութեան ժամանակ. որովհետև մի քանիսը ցանկանում են, որ Կիրակոսը քեօխվայ լինի, իսկ մնացածները չեն սիրում Կիրակոսին, նրանք էլ ցանկանում են, որ այդ պաշտօնը Մարկոսին տան։ Այսպէս էլ, գիւղի կէսը կամենում է, որ տիրացու Սագոն (Սարգիս) քահանայ լինի, իսկ միւսները պնդում են թէ քահանայութիւնը տիրացու Պետոյին (Պետրոսին) է արժան։ Մի քանիսը տիրացու Պետոյի և քեօխվացու Կիրակոսի առաջարկած խնդրագրին են ստորագրում, իսկ միւսները տիրացու Սագոյի և քեօխվացու Մարտիրոսի։ Այսպէսով ծագում է երկու կուսակցութիւնների մէջ ատելութիւն, խռովութիւն, վերին ատիճանի թշնամութիւն. օրատօրէ չատանալով զանազան վնասակար հետևանքների պատճառ են դառնում, որովհետև չատ անգամ երկու կուսակցութիւնների մէջ թշնամութիւնը այն ատիճան է բորբոքվում, որ մէկէլ տեսար, մեր գիւղացիք երկաթազուրս մահակներով, սամիներով, ահագին փայտերով զինուորված, դուրս են թափվում իրանց այս և այն գեղատիր խրճիթներից, և սկսում են մի զարհուրելի ճակատամարտ «Ցօ, տղէք խփեցէք, տվէք, զարկէք, ջառթէք, սրանէք, ես ըռանց ֆլանը ու բէֆանը» կատաղի ձայնով բղաւում են ամեն կողմից և տալիս են իրար գլխի, առանց խնայելու աչք, երես.... Որի ոտն է կոտրվել «վայ մարիկ ջան» է գոռում, որի կուռն է կոտրել, որի ճեղքված գագաթից արիւնը հոսում և ներկում է ամբողջ մարմինը, որն էլ մի երկու վայրենի հարուածից յետոյ, ուշաթափվել է, չալակած տուն են տանում նրա կիսամահ դիակը, կծերով սառը ջուր գըլխին ածում, ականջները պինդ քաշում, ապտակներով երեսին սաստիկ խփում, ճղավում, բղավում, հրացան դատարկում, ասեղներով ու մախաթներով անչունչ դիակը ծակծկում, որ արթնանայ, խելքը գլուխը բերէ, բայց ի զուր, նա չատ խորը քնած է....

Հետևեալ օրը վիրաւորվածները փաթաթած, գիտութեամբ արիւնները հանդերձների վրա չորացրած, սայլի կամ ձիու վրա նստեցրած տանում են քաղաք դատաւորի մօտ, բողոքում են գործի եղելութիւնը, որից յետոյ մի քանիսը բանտարկվում են, մի քանիսը տուգանք են տալիս և այսպէս իրանց արժանի պատիժն ստացած վերադառնում են տուն։ Սրանով դեռ չեն բաւականանում մեր գիւղացիք, կրկին հաւաքվում են, աւելի բարկացած և ջերմեռանդութեամբ սկսում են, մէկը միւսի վրա զրպարտութիւններ գտնելով, խնդրագրեր պատրաստել, որոնց չուտով կատարվելու համար, ոչինչ չեն խնայում, միայն թէ իրանց ասածը լինի։ Խնդրագրերը տալուց յետոյ, տուն, տեղ անտէր թողած, այս և այն դատարանների պատերի տակ ամիսներով քաշ են գալիս և զուր ժամանակ կորցնում։

Բայց ամենից չատ վնասվում են երկու կուսակցութիւնների պատճառ. քեօխվացու Կիրակոսը և Մարկոսը, որովհետև սրանք էլ, իրանց սիրած պաշտօնին հասնելու համար, չուտ չուտ ոչխարներ են մորթում, իրանց կուսակիցներին տուն հրաւիրում, ուտացնում, խմացնում. «Ցօ, ձեզի պէս զրկցները սաղ էղնին ընձի համար, իմ մալս էլ, զոլվաթս էլ զուրբան էղնի ձէզի» փաղաքշելով ասում է քեօխվացու Կիրակոսը։ «Կիրակոս մատաղ, դու հէչ թալաշ մի էնէ, մէկ, մէկ կով ունինք, էն էլ կը ծախենք, ու մեր ըսածը կենենք. դու ինչ խելքի ես, մենք կը թողնինք օր Մարկոսը քեօխվայ էղնի ու մեր արտերը ձեռներիցս առնի ու վախտի բէվախտի մեզի կոռ ու բէգեար զրկէ» բորբոքված ձայն են տալիս կուսակիցները միաբերան։

Քեօխվացու Կիրակոսը իր կուսակիցներին պատվելուց զկնի, մի քանի գլուխ չաքար, ֆունտերով թանկագին չայ, իւղ, պանիր, ձուկ առած, քաղաք է գնում, այս և այն նշանաւոր մարդկերանց ընծայում, որ իր գործը եօլայ տանեն։

Վերջապէս Կիրակոսի կամ Մարկոսի բաղդը կորոշվում է լինում, երկուսից մէկը հասնում է իր ցանկալի նպատակին—լինում է քեօխվայ և իր պաշտօնի մէջ մտած բօղէից սրբազան պարտականութիւն է համարում նախ և առաջ իր վրէժը հանել հակառակ կուսակիցներից, որոնք չէին կամենում իր առաջարկած խնդրագրին ստորագրել։

Այժմ ասենք մի քանի խօսք, թէ ինչու համար ամենքն էլ այդքան չարչարվում են, փողեր են մխսում, որ քեօխվայ լինեն։ Նախ նրա համար, որ քեօխվայ լինողը ազատ է լինում արքունի կոռ ու բէգարից, երկրորդ՝ միջոց է ունենում իր վաղուցվայ թշնամի համարնակչից վրէժը հանել. երրորդ՝ իւրաքանչիւր տուն պարտական է թէ հնձի և թէ կալսելու ժամանակ մի մի մշակ ուղարկել քեօխվի արտը աշխատելու, չորրորդ՝ քեօխվէն գիւղացիների հաշուով տարեկան վարձած կունենայ մշտական իր տունը մնացող մի ծառայ (գիւղական լեզուով չաւուշ), հինգերորդ՝ գիւղերում մրգեղէն տանողները, առանց կանխապէս տեղական քեօխվին բաժին տանելու, իրաւունք չունեն ծախելու. վեցերորդ՝ անհրաժեշտ պարտականութիւն է որ գիւղի քեօխվէն ամեն մի պատուի և հանդէսի պարագլուխ լինի և վերջապէս եօթներորդ՝ որ աւելի նշանաւորն է, իր անունը քեօխվայ կը մնայ և պաշտօնից դուրս գալուց յետոյ էլ «քեօխվայ Կիրակոս» կը կանչեն, որ իրա համար մի մեծ մխիթարութիւն է։

Ս. Տէր-Մելիքսեդեկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան 20 ապրիլի

Վերջին անգամ Երևանից գրված նամակիս մէջ, տեղոյս թատրոնի համար փող ժողովող պարոնների թուում ես յիշել էի և պ. Զ. Գէորգեանին, բայց փոխանակ Զ. տառի տպված էր Ժ. Գէորգեան։ Թէ այդ պարոնը և թէ մի քանիսը կարծում են այդ սխալը մենք դիտմամբ ենք արած, Ժ. տառին մի այլ նշանակութիւն տալով։

Հաճեցէք, պ. խմբագիր, հասարակական կարծիքը պարզելու մտքով այս երկու տող գրութիւնը ձեր լրագրի առաջիկայ № ից մէկում տեղ տալ։

Ա. Ը.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказъ» լրագրում կարդում ենք, որ ապրիլի 23-ին Թիֆլիսում ուրախալի լուր ստացվեցաւ թէ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի ԱՆԱՍՏԱՍԻԱ ՄԻԽԱՅԻԼՕՎՆԱ նշանված է Մեկլենբուրգ-Շվերինեան Գրօս-Հերցոգի Ժառանգի հետ։

Մեզ խնդրում են յայտնել, որ կիրակի օրը, ապրիլի 30-ին, լինելու է ԹԻՖԼԻՍԻ հայոց անուանված կլուբում (Սօբրանիայում) երաժշտական առաւօտ (музыкальное утро)։ Սկիզբը 12 ժամին. կոնցէրտը տրվելու է բարեգործական նպատակով, այսինքն յօգուտ երկու Թիֆլիսցի հայ երիտասարդների, որոնք ուսանում են այժմ Ս. Պետերբուրգի Շքեղարուեստների Ակադեմիայում։ Այդ կոնցէրտին մասնակցելու են հետևեալ տիկինները՝ տիկին Կիրպոտինա, տիկին Սալացկայա և տիկին Գամբարով, պարոններից մասնակցելու են հետևեալ երաժիշտ սիրողները՝ պ. պ. Մաշին, Կիւմմէլ, Տրուֆի, Տօրիանի, Մարտօրացի և Լօնդօ։ Մուտքի գները հետևեալներ են՝ 3, 2, 1 ռուբլ. և 50 կոպ.։ Տոմսակները կարելի է ստանալ Լանկօի Մուզիկային մագազինում, Արբրունու տանը, Դվորցովի փողոցի վրա, իսկ կոնցէրտի օրը կլուբում։

—

Լսում ենք որ ապրիլի 26-ին Մուխրանսկու տան վրա աւազակների խմբից արած յարձակման ժամանակ, բացի բնակարանի մէջ կենդանիներից՝ վիրաւորված են նոյնպէս և տան մէջ ծառայող մշակներից մանք։ Կասում են չատ ծանր կերպով վիրաւորված է գնտակը մտել է կուրծքը, խոհարարին, որ անյուսալի դրութեան մէջ է տարան արդէն քաղաքային հիւանդանոց։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ փողոցներից մէկում պահապան զօրքերը պատահում են մի խումբ աւազակների և նրանց վրա հրացաններ են արձակում։ Տարաբաղդաբար գնտակը դիպչում է խանութի պահապաններից մէկին, որ պատահմամբ աւազակների կողմն է եղել կանգնած։

—

ԹԻՖԼԻՍԻ բնակիչները ասում են, որ նոքա չատ տարիներ է որ չեն տեսել կուր դեռը այսքան մեծացած։

—

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են. «Այստեղ սարսափելի թանգութիւն է. հացը, չը նայելով որ այս տարի չատ առատ էր, պուդը սպիտակ ալիւրի ծախվում է 1 ր. 60 կոպ., գարին 1 ր. 30 կ., սիմինդր 60 կ., խոտը 1 ր. 20 կ., միսը, թէ սաւարի և թէ ոչխարի, ֆունտը արժէ 15 կ., մի հաւ արժէ 1 ր. 20 կ., պանրի ֆունտը 30 կ., իւղը 90 կ., մի սայլ փայտ 3 ռուբլ. որ չը լսված բան է այստեղ։ Երկու ձուն 5 կոպէկով է ծախվում, իսկ մի բաժակի չափ կաթ նոյնպէս 5 կոպէկ։ Ասում են որ սորանից յետոյ աւելի էլ կը թանգանան ամեն տեսակ մթերքները, որովհետև այս ամառը չորս զինուորական հիւանդանոց բացվելու են այստեղ։ Մեր կարծիքով թանգութեան պատճառը այն է, որ այս կողմերում չատ քիչ ուշադրութիւն է դարձրած ամենահարկաւոր մթերքների արդիւնաբերութեան վրա։ Այս կողմերում, պէտք է ասել որ գիւղացին չատ աղքատ դրութեան մէջ է. նա չունի մինչև անգամ կարողութիւն մի կով կամ մի քանի հաւ պահելու։ Գիւղացուն երբ հարցնում ես թէ ինչի չունի գոնէ մի կով, նա պատասխանում է թէ կենդանին աւելի ուտում է քան թէ օգուտ է տալիս, իսկ գիւղացին նորա համար այնքան կերակուր չունի. ունի հազիւ այնքան, որքան եղներին է բաւական։»

—

Մեզ հաղորդում են ՍՈՒՐԱՄԻՑ, որ այնտեղ ծաղիկ հիւանդութեան պատճառով հայոց ծխական ուսումնարանի աշակերտների մեծ մասը քանի մի ժամանակ է չեն յաճախում ուսումնարանը։

—

Նախանձոտ ամուսնին այդ դուր չեկաւ և նա յարձակվեց դերասանի վրա։ Երկու հակառակորդները սկսեցին փայտերով չատ կանոնաւոր կերպով միմեանց ծեծել։ Պատահմամբ է կուռողներին բաժանելու, տարաբաղդաբար փայտը դիպչում է նրա մատին և երեսի երգչուհին ուշաթափ է լինում։ Նրան տանում են իր առանձնասենեակը, իսկ կուռողները շարունակում են միմեանց կողքերը տրորել։ Որքան աշխատում են, չեն կարողանում բաժանել հակառակորդներին։ Կռիւ ժամանակ անցնում է Պատոիի աղախիններից մէկը, որ իր տիկնոջ համար զելցերեան ջուր է առնում. նա զելցերի ջրի ամանի խողովակը ուղղում է հակառակորդների վրա և միւս ծայրը հուփ է տալիս։ Զելցերի ջուրը թափվում է կուռողների վրա և նրանք իսկոյն միմեանցից հեռանում են։

Եթէ աղախնի հնարագիտութիւնը չը լինէր, հակառակորդները դեռ երկար կը ջարդէին միմեանց կողքերը։

***

Նորերումս Փարիզի դատարաններից մէկում քննվում էր մի հետաքրքիր գործ։ Գանգատվում էր մի կին իր տան մէջ բնակվող այրի մարդուց վիրաւորանքի համար։ Կինը չէր ցանկանում, որ պատժէին այրին, այլ որ նրան ստիպէին պահել իր խոստումը և պսակվել իրան հետ։ Մեղադրվածը յայտնում է, որ նա երեք անգամ գնացել է քաղաքապետի մօտ, բայց նա ամեն անգամ բացատրում էր դրանց պսակել։ Կինը հաստատեց մեղադրածի խօսքերը և աւելացրեց, որ ամեն անգամ, երբ նրանք գնում էին քաղաքապետի մօտ, իր փեսայացուն հարբած էր լինում։

—Ի՞նչի դուք պսակվելու համար ընտրում էիք այնպիսի օր, երբ ձեր փեսայացուն հարբած էր լինում, հարցնում է նախագահը։

—Երբ փեսայացուս հարբած չէ, պ. նախագահ, ասում է կինը, նա ոչինչով չէ համաձայնվում գնալ քաղաքապետի մօտ պսակվելու, իսկ երբ նա համաձայնվում է պսակվել, այն ժամանակ քաղաքապետը չէ կամենում ասելով, որ նա հարբածներին չէ կարող պսակել։ Ես ճշմարիտ չը գիտեմ. ինչ անեմ....

Ուղիղն ասած այսպիսի դէպքը, երբ կինը չը գիտէ ինչ անէ. չատ հազուագիւտ է լինում։ Հազուագիւտ է լինում նոյնպէս այնպիսի մարդ, որ կարողանում է միջոց գտնել կնոջից ազատվել, երբ կինը անպատճառ ուզում է պսակվել....

***

Բարեկամներիցս մէկը պատմում էր հետևեալ անցքը։ «Մի քանի չաբաթ առաջ հետևեալ նամակը ստացայ։ «Սիրելի պարոն, վաղուց դուք կամենում էիք ինձ հետ տեսնվել։ Ձեր նամակները ինձ վրա ազդեցին, այլ ես չեմ կարող ընդդիմանալ նրանց գիւթիչ զօրութեանը։ Երեկոյեան ժամի 5-ին եկէք Բօտանիական այգին, ես այնտեղ կը լինեմ. Ցոյս ունիմ, որ դուք չատ համեստ կը լինէք։»

«Նամակի տակը գրած էր X տառը։ Ես իսկոյն իմացայ, ասում է բարեկամս, ով էր նամակի հեղինակը.... Ժամի 3-ին ես արդէն Բօտանիական այգումն էի։ Մինչև հինգը մտածում էի, թէ ինչեր կասեմ իմ սիրուհուն։ Երևակայութիւնս սաստիկ գրգռված էր... Լրանում է հինգը, ոչ ոք չը կայ, միայն մի քանի անծանօթ կանայք էին զբօսնում, լրանում է վեցը, դարձեալ ոչ ոք չը կայ, վեց և կէսին մօտենում է ինձ մի ծառայ, փոքրիկ նամակ է տալիս և իսկոյն հեռանում է։ Նամակի մէջ գրած էր. «Նայեցէք այսօրվայ ստացած նամակը մոմի վրա, կամ արևի տակ.» Նոյն սառորագրութիւնը։ Ես նայում եմ նամակը մոմի վրա՝ Ապրիլի 1-ը գրած էր թափանցող թանաքով։ Կարծես սառը ջուր ածին ինձ վրա։»

Բարեկամս անմխիթար էր այդ անցքից, նրան մխիթարելու համար ես պատմեցի նրան լրագրերում կարդացած տեղեկութիւնները ապրիլի մէկի մասին։

***

Ապրիլի մէկին խաբելու սովորութիւնը կայ Գերմանիայում, Անգլիայում, Դանիայում, Շվեցիայում, Նիդերլանդներում և Ֆրանսիայում։ Անգլիայում ապրիլի մէկը անուանվում է յիմարների օր։ Գերմանական առածը ասում է, որ ապրիլի մէկին յիմարներին կարելի է ուղարկել ուր ուզում էք։ Ապրիլի մէկի հանաքների նպատակն է ոչ թէ միայն խաբել, այլ ստիպել մէկին ի զուր մի տեղ գնալ։ Անգլիայում առհասարակ մէկի հետ նամակ են ուղարկում, որի մէջ գրած է լինում՝ յիմարին մի մզոն հեռու ուղարկիր։ Մի քանիսը կարծում են, որ ապրիլի մէկին խաբելու սովորութիւնը նրանից է ծագել, որ այդ օրը եղանակը լինում է փոփոխական, խաբող։ Միւսները կարծում են, որ այդ սովորութիւնը անցել է Եւրոպա Հնդկաստանից, որտեղ սովորութիւն կայ միմեանց խաբել Huli-Fest ասելի վերջին օրը, որ համապատասխան է մեր մարտ ամսի 31-ին։

Անայատ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ տեղացի հայերը ուշադրութիւն չէն դարձնում երեխաների դաստիարակութեան վրա։ Երեխաները մինչև 12 տարեկան հասակը թողած են լինում ռուս ագէտ աղախինների խնամքին։ Հայ ընտանիքներից, որքան էլ խեղճ լինեն, ոչ ոք չէ կամենում ծառայել, այս պարապմունքը իր համար սոր համարելով, բայց պատահում են շատերը, որոնք մուրալով են ապրում։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ գրում են, որ քահանաները շատ անգամ դէպի չարն են գործածում բանց իրաւունքը։ Երբ նրանց մօտ գնում է իր ամուսնից բաժանված մէկ կին խոստովանելու համար, քահանան, խրատված կնոջ ամուսնից, բացատում է և առաջարկում է առաջ հաշտվել ամուսնի հետ, յետոյ խոստովանվել։

—

«Մշակի» խմբագրութիւնը դարձեալ յայտնում է որ առանց բացառութեան ոչ ոքի չէ վերադարձնում իրան ուղարկած յօդուածները և նամակները։

—

Խնդրում ենք մեր բաժանորդներից նրանց, որոնք մի քաղաքից միւս քաղաք են տեղափոխվում, յայտնել խմբագրութեանը թէ մօտաւորապէս որքան ժամանակ են մնալու նոր բնակութեան տեղը։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել երկու 8 կոպէկանոց փոստի մարկա։

—

«Кавказъ» լրագրին հաղորդում են, որ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու Սուրամի և Միխայլովո կայարանների տարածութեան վրա գտնվող բանուորների վերակացու Յատաձէն նկատելով, որ պահապաններից մէկը պակաս է, գնաց նրա բնակարանը և տեսաւ, որ պահապանը և մի բանւոր սպանված ընկած են։ Սպանութիւնը կողոպտելու դիտաւորութեամբ է գործած։ Չարագործներին փնտռում են։

—

«Тифл. Вѣстн.» լրագրի № 91 մէջ խմբագրին ուղղած մի նամակ կայ տպած, որով նամակագիրը, Հալաբարի բժիշկ Վերմիշեվ, հերքում է «Մշակի» № 62 մէջ տպած և «Тифл. Вѣстн.» լրագրում արտատպած լուրը, իբր թէ բժիշկները Հալաբարում մերժում են այցելել տիֆով հիւանդներին։ Բժիշկ Վերմիշեվ յայտնում է, որ նա այցելում է հիւանդներին ոչ թէ միայն իր բաժնի մէջ, այլ և ուրիշ բաժիններում, երբ իրան հրաւիրում են և հիւանդութիւնների մէջ ընտրութիւն չէ անում։ Շատ ուրախ ենք, եթէ ճշմարիտ պ. Վերմիշեվ այդպէս խղճմտաբար կատարում է իր պաշտօնը, այսքանը կասենք, որ մեր լրագրի № 62-ի մէջ տպած լուրը մեզ հաղորդել էին, իսկ լուր հաղորդողը երևի իր պատճառները ունէր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Խաղաղութեան կողմնակից գործաւորները որոնք կամենում են կոնդրէսի կայանալը արգելան խնդրի լուծման համար, հրապարակական մի մեծ ժողով են արել պարլամենտի անդամ պ. Բրոտի նախագահութեամբ։ Հրապարակախօսների մէջ գտնվել է նաև պ. Գլադստոն, ընդդիմադիր կուսակցութեան նախկին պարագլուխը։ Պ. Գլադստոն ասել է թէ պարլամենտի վերջին վճռաբանութիւններից յետոյ, գործերի դրութիւնը փոխված է դէպի լաւը, թէ ինքը համոզված է որ պատերազմ չի լինի, կոնդրէսը կը կայանայ և Թիւրքիայի քրիստոնեայ ժողովուրդները կը ստանան այն ազատութիւնները որոնց անունով եղաւ ռուս-թիւրքական պատերազմը։

Ամբողջ Անգլիայում մեծ յուզում պատճառեց լորդ Լէյարիմի սպանվելը Իրլանդիայում։ Նրա թաղման հանդիսի ժամանակ Դուբլինում եղած անկարգութիւնները արձագանք ունեցան պարլամենտի մէջ անգամ։ Պարլամենտի անդամներից Իրլանդայի պ. Օ' Դոնելը հարց բարձրացրեց այդ բանի մասին համայնքների խորհրդարանում և սաստիկ քննադատեց սպանված լորդ Լէյարիմի անցկացրած կեանքը Իրլանդիայում։ Վիճաբանութիւնը սաստիկ տաքացաւ, բայց ինչ հետևանքի հասնելը դեռ չէ հրատարակված, որովհետև նախագահը պարտաւորվեցաւ մեծամասնութեան առաջարկութեան համեմատ դատարկել տալ ունկնդիր ժողովրդին և լրագրի աշխատակիցների նստած տեղերը։ Ժողովը այդ հարցի համար գռնտիակ նիստ է ունեցել երեք ժամից աւելի։

Լօրդ Լէյարիմ Իրլանդիայի ամենահարուստ կալուածատէրերից մին էր. 137,555 հեկտար հող և անտառ ունէր Իրլանդիայի զանազան քաղաքներում։ Այն խեղճ գիւղացիները և աղքատները որոնք բնակվում էին կամ աշխատում լօրդ Լէյարիմի կալուածներում, նրա գերիներն էին։ Նատ անգթօրէն էր վարվում նրանց հետ, ամենափոքր պակասութեան համար բանտարկել տալով, արտաքսելով և այլն։ Բայց այս, վերին աստիճանի դայթակղական էր նրա կեանքը. իր իշխանութիւնը գործ էր ածում իր վասալների ընտանեկան կեանքը արատաւորելու համար և նրանցից շատ օրիորդներ զոհ եղած էին իր խայտառակութիւններին, այնպէս որ լօրդ Լէյարիմ անուանի էր եղած ամբողջ Իրլանդիայում իր անառակ կեանքով։ Վասալների պատուասիրութեան և վրէժխնդրութեան զգացումը վերին աստիճանի գրգռված էր լօրդ Լէյարիմի դէմ և մի քանի փորձ էին փորձել սպանել նրան։ Վերջապէս, մի քանի շաբաթից առաջ, կառքով անցած ժամանակ մի անտառի մօտից, մի քանի անձեր յարձակվել են և սպանել են նրան, կառապանին, և երկու սպասաւորներին։ Լօրդ Լէյարիմ 72 տարեկան էր։ Իրլանդական ամեն լրագիրներ զզուանքով և ատելութեամբ գրում են նրա մասին։

Մարդասպանները դեռ գտնված չեն։ Դուբլինի ոստիկանութեան գլխաւորը բազմաթիւ հեծելազօրքերով որոնում է մարդասպանների հետքը։ Լօրդ Լէյարիմի որդին խոստացել է 250,000 ֆրանկ մարդասպանների յայտնողին. անգլիական կառավարութիւնն էլ իր կողմից խոստացել է 12,500 ֆրանկ և Դոնեգալի դքսութեան մագիստրատներն էլ 25,000 ֆրանկ։

Դուբլինում լօրդ Լէյարիմի թաղման հանդէսը կատարված օր մեծ բազմութիւն է հաւաքվել եկեղեցու և գերեզմանատան առջև։ Տեղական իշխանութիւնը ոստիկաններ է ուղարկել որ անկարգութիւններ չը լինին ամբոխի կողմից։ Երբ յուղարկաւորների բազմութիւնը մօտեցել է եկեղեցուն, ամբոխը սուլելով և խայտառակ ձայներ հանելով ընդունել է նրանց։ Յետոյ յարձակվել են դագաղը ծածկոցի ժապաւէնները բռնողների վրա, նրանց գետին են գցել և փախցրել են մեռելի կառքին հետևող բազմութիւնը։ Խռովարարների պարագլուխները որոնցից շատերը հարբած են եղել, ուզեցել են կառքի միջից յափշտակել լօրդ Լէյարիմի դիակը և ոստիկանները մեծ դժուարութեամբ հազիւ կարողացել են ազատել, մինչև որ ոստիկանների նոր խումբեր հասել են օգնութեան։ Այդ տեսարանը կէս ժամի չափ տևել է։ Դագաղը գերեզմանատուն փոխադրված ժամանակ էլի սաստկացել է կռիւը, լօրդ Լէյարիմի բարեկամներից շատերը վիրաւորվել են և ոստիկանների բազմութիւնը հազիւ կարողացել է հանդարտեցնել ամբոխին։ Ամբոխը շարունակել է բղաւել և կատուի և շան ձայներ հանելով խայտառակութիւններ անել մինչև որ պատարագը վերջացել է և դիակը թաղվել է ոստիկանների պաշտպանութեամբ։ Այս անկարգութիւնների պատճառով, անգլիական կառավարութիւնը պաշտպանման դրութեան մէջ դնելով խիստ հսկողութեան է ենթարկել Դուբլինը և լօրդ Լէյարիմի բոլոր կալուածները։

Ապրիլի 12-ին թէ լորդերի և թէ համայնքների խորհրդարանում տաք վիճաբանութիւններ եղան այդ հարցի վերաբերեալ։

ԹԻՒՐՔԻԱ

—

«Daily News» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են ապրիլի 22-ին հետևեալը. «Այստեղ ենթադրում են, որ դաւաճանութիւն է կազմված սուլթանին գահընկեց անելու համար. ինչպէս ասում են այս դաւաճանութեանը կը մասնակցի մինչև անգամ նոր մինիստրութիւնը, նոյնպէս և Ահմէդ Վէֆիկ-փաշան և վերջին կառավարութեան շատ ուրիշ անդամներ։ Այս օրերս, մի երեկոյ Մահմուդի մեշիդում ժողով կար, այս ժողովում շատ խիստ ճառեր խօսեցին Միթհադ-փաշայի կուսակիցները, որոնք ասում էին թէ սուլթանը ցանկանում է դաշն կապել Ռուսաստանի հետ։ Դաւաճանները աշխատում էին ուլեմներին և սոֆտաներին գրգռել։ Սուլթանը կամենում է գնալ իր ընտրած ճանապարհով, որը չէ համապատասխանում փաշաների մտքին և կարծիքներին։ Կարծում են որ Մուրադը աւելի զգօշ կը լինի։ Դաւաճանները կամենում են կրկին վերադարձնել նրան և գահը բարձրացնել։ Եթէ այս ճշմարիտ է, այն ժամանակ բոլոր բանը կախված է Օսման և Մուխթար-փաշաներից։ Ցայտնի չէ նրանց կարծիքը, բայց ենթադրում են որ նոքա հաւատարիմ կը մնան սուլթանին։ Թիւրքերը այն ասպիճան վհատված են և անբաւական են սուլթանից և փաշաներից, որ ամեն տեսակ փոփոխութիւնների վրա նրանք սաստիկ սառնասրտութեամբ կը նայէին։ Օսման և Մուխթար-փաշաները իրանց ձեռքում բռնած ունեն գործերի դրութեան բանալին։ Ես լաւ աղբիւրից իմացայ, որ վերջին օրերի ընթացքում, Թիւրքերը ամեն տեսակ պատրաստութիւններ էին տեսնում Կ. Պոլիսը թողնելու։ Ինձ ասում էին, որ գիշերով ծածուկ մեծ քանակութիւն ընտանեկան կահ կարասիքի ուղարկել են Բրուսսա, որտեղ Տօպխանէի զէնքի գործարանը նոյնպէս ուղարկեց մեծ քանակութիւն պատերազմական գործիքների, և շատ թնդանօթներ։ Ասում են, որ բազմաթիւ պալատականներ արդէն գնացել են Բրուսսա, որ սուլթանի և նրա ավիտայի համար պատրաստութիւններ տեսնեն։ Ինչպէս երևում է կառավարութեան այս տեղափոխվելու պատրաստութիւնները տեսնվում են այն պատճառով, որ Թիւրքերին ազատեն ռուսների Կ. Պոլիս գրաւելը տեսնելուց։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Ընդարձակ Ընկերութեանը» Կ. Պոլսից հեռագրում են ապրիլի 22-ից հետևեալը. «Պ. Լայարդը Թիւրքիայի ամեն կողմերից առաջարկութիւններ է ստանում անգլիական զօրքի մէջ ծառայութիւն մտնելու։ Լիվադիա և մի քանի ուրիշ ռուսաց նաւեր առաջ գնացին դէպի Պրինցեան Կղզիները, և ասում են, որ Բ. Դուռը հարց առաջարկեց ռուսաց կառավարութեան թէ ինչ նպատակով մօտեցան այս նաւերը անգլիական նաւատորմին։ Ամենքը կարծում են որ նոր կաբինէտի նշանակելը հարուած տուեց անգլիական ազդեցութեանը Կ. Պոլսում։ Սխալ է, ինչպէս հաստատում էին, որ իբր թէ պ. Լայարդի և նոր մինիստրութեան յարաբերութիւնները բարեկամական են»։

—«Daily Chronicle» անգլիական լրագիրը գրում է թէ Գերմանիայում անգլիական դեսպան լօրդ Օդօ Ռըսսէլ կանչված է Լօնդոն, բերանացի հրահանգներ ստանալու համար թէ ինչ քաղաքականութեան պէտք է հետևի կոնդրէսի հարցի վերաբերութեամբ։

—Բերլինից գրված թղթակցութիւնները յայտ են տալիս թէ իշխան Բիսմարկի խաղաղական միջամտութիւնը կաջողվի և կոնդրէսը կը կայանայ մայիս ամսի վերջերում։

—Կ. Պոլսից հեռագրում են ապրիլի 25-ին (13) թէ Բօլգարիայում ռուս կառավարութեան դէմ ապստամբված մահմեդականների թիւը 15 հազարի է հասնում Թօդօպեան լեռների բամբում։ Ապստամբները լաւ զինաւորված են և ունեն իրանց հետ չորս կրուպի թնդանօթներ որ

—«Standart»-ի մէջ գրված է հետևեալը։ «Հաւատարմութեան արժանի տեղից իմացել ենք որ մի քանի ռուս զինուորական պաշտօնատարներ անց են կացել Հռօմից և այժմ գնում են դէպի Սուէզ և Պարսկական ծոցը։ Պէտք է վերադառնան Ռուսաստան Պարսկաստանի ճանապարհով։ Իրարից բաժանված և առանձին տեղեր են բնակվել Հռօմում որ ուշադրութեան առարկայ չը լինեն։ Հետաքրքիր է գիտենալ թէ այդ պաշտօնատարները արդեօք ինչ նպատակով են այցելում Սուէզի ջրանցքին։»

—«Standart» լրագիրը գրում է թէ անգլիական կառավարութիւնը պատրաստութիւններ է անում տորպէդների գործածութեան համար և Հիւլլում գնել է զանազան նաւեր որոնք գործածվում են ծովի ներքև լինելու գործողութիւնները դիւրացնելու համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները հաղորդում են որ նորերումս Կ. Պոլսի մէջ զգալի են եղել երկրաշարժի մի քանի հարուածներ։ Այդ երկրաշարժը ոչինչ վնաս պատճառած չէ բնակիչներին։

***

Նէապոլի Միւրատ թագաւորի վերջին որդին, իշխան Լուցիան Միւրատ, վախճանվեցաւ Փարիզում, ապրիլի 10-ին, 75 տարեկան հասակում։ Երկար ժամանակ ապրելով Ամերիկա, նա վերադարձաւ Փարիզ 1848 թվին, դեպուտատ ընտրվեցաւ և կայսերութեան ժամանակ սենատոր դարձաւ։ 1851 թվին նա ամուսնացաւ բողոքական Միս Ֆրէզէր օրիորդի հետ, որը դեռ ևս կենդանի է։ Նա թողեց երեք տղայ և երկու աղջիկ, այդ աղջիկներից մէկը, տիկին Շասօրոն—բողոքական է, ընտանիքի մնացած անդամները—կաթոլիկ են։ Նրա երկրորդ աղջիկ Աննա Միւրատ, ամուսնացած է դը-Մուչի դուքսի հետ։ Երկրորդ կայսերութեան ժամանակ Միւրատները կրում էին կայսերական բարձրութիւն տիտղոսը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 25 ապրիլի (7 մայիսի)։ «Presse» լրագիրը ասում է որ Բ. Դուռը ենթարկվեցաւ Ռուսաստանի պահանջներին և մաքրեց Շումլա։ Իսկ Վարնա և Բաթում բերդերը նա դեռ ևս չէ մաքրում։

ԼՕՆԴՕՆ, 25 ապրիլի (7 մայիսի։ «Times» լրագիրը քննելով Շուվալովի Ս. Պետերբուրգ գնալը ասում է, «Մենք զգօշ չենք այն ընդդիմադրութեան կէտի մասին որ վերաբերվում է Ռուսաստանի գերակշռութեանը։ Մեր անհրաժեշտ պահանջը որ ամբողջ դաշնագիրը ներկայացրած լինի կոնգրեսին, թեղադրած չէ Ռուսաստանին յաղթելու ցանկութենից, այն նպատակների մէջ, որ նա յայտնել է պատերազմի սկզբում։»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 ապրիլի։ Ս. Պետերբուրգում լուր կայ, որ Տրեպով քաղաքապետի տեղ նշանակվում է իշխան Գոլիցին։

ԼՕՆԴՕՆ, 26 ապրիլի (8 մայիսի)։ Երեկ պարլամենտին ներկայացրին Ռումինիային վերաբերեալ դիպլոմատիական գրութիւնը, որից երևում է, որ Ռումինիայի գործակատարը Կատարջի նկարագրից Սալիսբիւրի լորդին Ռումինիայի վանդաւոր դրութիւնը, ասելով որ Բեսարաբիան կատարելապէս գրաւված է ռուսաց զօրքից, և Ռումինական կառավարութիւնը ամեն րօպէ կարող է ստիպված լինել հեռանալ Փոքր-Վալախիա։ Կատարջին յայտնեց, որ Ռումինիան ցանկանում է ունենալ իր ներկայացուցչին կոնգրեսում և վճռել է զգօշութիւն չանել Ռուսաստանին։ Սալիսբիւրին պատասխանեց, որ Անգլիան ցանկանում է պահպանել Ռումինիայի ամբողջութիւնը։ Շուվալով երեքշաբթի օրը դուրս եկաւ Լօնդոնից։ Ճանապարհ ընկնելուց առաջ նա տեսակցութիւն ունեցաւ լորդ Բիկոնսֆիլդի հետ։ Նրա վերադարձը սպասվում է Լօնդոնում 10 (22) մայիսին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌՈՂՋԱԿԱՆ—ԱՍԵՆԻԶԱՑԻՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՒՈՐԸ ծաղիկ տարափոխիկ հիւանդութեան առաջն առնելու համար, հրատարակում է իր բաժնի մէջ (Թիֆլիսի առաջին, երկրորդ, երրորդ և առանձին մասերի) բնակիչներին որքան կարելի է շուտով կորել երեխաների ծաղիկը։ Ծաղիկը պատուաստում են երեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը առաւօտեան ժամի 10-ից ծաղիկ պատուաստող հիմնարկութեան մէջ, որ գտնվում է Զավշավաձէսկայա փողոցում, զինուորական գիմնազիայի դիմացը։ Բացի այդ առողջական առաջին բաժինը ունի ծաղիկ պատուաստող, որ ամեն օր ծնողների պահանջներին համեմատ ծաղիկ է պատուաստում տներում։

3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ ուսում է առել Փարիզում, ցանկանում է տալ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ։ Կարող է նոյնպէս ՐԵՊԵՏԻՏՈՐԻ ՊԱՇՏՕՆ վարել։ Հացէն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատանը։

9—10

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

Վաճառականներից և տներ շինողներից տուած ձևերով կամ գործարանների պրէյսկուրանտներով՝ պատուհանների, դռների և վառարանների կաղմածքներ (приборы)։ Բացի այդ ծախվում են մանր կուպղեր (замки), գլանակներ, գամեր, սողնակներ (задвижки), որոնք գործ են ածվում արկղների, կօմոդների, պահարանների և բաղկաթոռների համար։ Ծախվում են նմանապէս ծորակներ (краны), սամովարներ, մոմակալներ, և այլն։ Այս բոլոր իրերը եղը. Բաաշիեվների տուլաում գտնված յայտնի գործարանից են։ Ցանկացողները Թիֆլիսում պէտք է դիմեն «Русскій Магазинъ» Միխայելովսկայա փողոց № 85։

Կովկասի համար գործակալ Ա. ԿՐԻՄԱՆՈՎՍԿԻ։

6—6 (2)

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Տամոժէննայա փողոցի վրա Ցունաց եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇԻՆԵՐ կօշիկների, թամբերի, կառքերի արուեստների համար և նոյնպէս հում կաշիներ։

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանտօրայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ։ Մաս մաս ծախվում է Սիօնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում։

14—25 (2)

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ընկերութեան նախագահը պատիւ ունի խնդարկել ընկերութեան և վարչութեան պ. պ. անդամներին ներկայ գտնվել ընկերութեան ԱՐՏԱԿԱՐԳ ՆՍՏԻՆ, որ մինելու է մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին։

2—3

Շուտով հրատարակելու եմ իմ ժողոված «Անեկդոտները», որոնք պարունակում են իրանց մէջ շատ երևոյթներ ազգային ներկայ և անցեալ կեանքից։

Տպվելու են բաժանորդագրութեամբ. ամեն մի օրինակի գինը 50 կոպ. է։ Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել պ. Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում։

3—3 Գ. Շերմազանեանց.

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐՑՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐՑՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ

ՇԱՏ ԷԺԵՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ վարչութեան կազմակերպութիւնը, ընդհանուր ժողովների վճիռներին համեմատ, այժմ հետևեալն է. Նախագահ Ս. Ա. Տալիզին, փոխնախագահ Դ. Ի. Կիպիանի, վարչութեան անդամները՝ իշխան Դ. Դ. Ջօրջաձէ, Մ. Ն. Գարսեվանով, և անդրկովկասեան մուֆտի Հաջի-Էֆէնդի-Մուստաֆա-Էֆէնդի-Զադէ։ Վարչութեան փոխ անդամներ. Մ. Կ. Լօմիձէ, Ե. Ի. Տիմիրիազեվ, Ե. Ի. Համարով, գանձապահ Ա. Գ. Սերգէեվ, փոխ գանձապահ Գ. Ն. Իսաելիանի, քարտուղար Ն. Ի. Մեշչերսկի, փոխ քարտուղար Ս. Ս. Հէյուկին։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ներկայ տարվայ մայիսի 10-ին իր ներկայութեամբ կը լինի աճուրդ առանց կրկնաճուրդի քաղաքի 1300 լապտերների նաւթով լուսաւորելը կապալով տալու համար։ Աճուրդը բերանացի կը լինի, աճուրդի օրը կարող է նոյնպէս ծրարած յայտարարութիւններ ներկայացնել։ Ցիշեալ աճուրդի պայմանների կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր, բացի աօներից, առաւօտեան ժամը 10-ից մինչև ժամի մէկը կէսօրից յետոյ։

Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի վարչութիւնը յայտնում է, որ իրանց երեխաներին ծաղիկ կարել ցանկացողները, կարող են հիւանդանոցին դիմել, որտեղ ծաղիկ պատուաստելը բժիշկների ներկայութեամբ կը կատարվի երկուշաբթի և ուրբաթ օրերը 10-մինչև 12 ժամը։ Ծաղիկ պատուաստելու վճարը 30 կոպ. է, իսկ աղքատների համար ծաղիկ կարելը ձրի է։

Դիրեկտորի տեղ Վէրմիշէվ։

3—3

ԱՊՐԻԼԻ 28. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Ապրիլի 27-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	8	80
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1300	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ամէ 112 զլ.	121	—
Դաւրեժի բարաթը. . .	5	75
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	40
» միւս տեսակը.	8	30
» չաքարաւազը .	6	—
» տրանզիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	70
Բուրդը թուշի . . .	8	50
» թարաքամի .	4	50
Ալիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	13	40
Մետաքս Նուխվայ . .	160	—
Կախետունը. . . .	90	—
Կոկոնը Նուխվայ (բոմ.)	47	—
Ֆրիզոնը (լաստը) Ադուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	28	—
» Լիվանի . . .	20	—
» մարտինկօյինը	19	—

ՀԵՌԱԳԻՐ	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան . .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվ. (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փոթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլօվ. .	5. 39	1. 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկէլիսի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա . . .	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալովիչ ներքին հիւանդութիւններ, քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Գավրօնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակտ վենէրական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլս աչքերի հ. Բակտ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՄՕԶԴՕԿ. Դ. Տ. Զ. Խնդրելուց չէ կախված մի յօդուածի տպագրութիւն, այլ իր արժանաւորութենից։ Եթէ մէկ օրինաւոր յօդուած ենք ստանում, ոմից էլ մի ուղարկված, իսկոյն տպում ենք առանց խնդրելու։ Զենք վերադարձնի։

—ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ. Անանուն. «Մշակի» անցեալ տարիների համարները կան խմբագրատանը։ Ցանկացողները ստանալ այդ համարները, պէտք է ուղարկեն նոյն տարվայ բաժանորդագինը, որ տարվայ համարները կամենում են ունենալ։

—ԲԱԳՈՒ. Ղ. Խ. «Մշակի» կէս տարվայ բաժանորդագինը վեց բուբլ դեռ չենք ստացել։ ստանալուն պէս կուղարկենք համարները։

—ԱՇՏԱՐԱԿ. Աշտարակեցի. Մեզ կամ մեր ընթերցողներին ինչ օգուտ, որ դուք ճրագբերան հազարներ էք աշխատել արաղ ծախելով։ Ձեր նամակի չը տպելը մեզ չէ արգելում ցանկանալ ձեզ միլիոններ աշխատել։ Միայն փոքրիկ մասն էլ հասարակական գանձանակը ծդեցէք։

Дозволено Цензурою Апрѣля 27 Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ